



ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶՈՒԵԾՏԱԿԱՆ

Ի Պուլկարիա Տարեկ. 10, Վեցամս. 5 ֆր. ԿԱՆԻՒԿ: Արտատաշման Տարեկ. 12, Վեցամս. 6 ֆր.
Գրութիւնք և տ չեն տրուիր: Հասցէ DIRAN PAPAZIAN YELDIZ TABIA, VARNA BULGARIE

ԱԶԳԱՅԻՆ

Պէտք է իմանալ, որ զբոսաշրջական վանական վարչութիւնը վերջերս ի Գահիրէ 28,000 ոսկիի ծախած է Ս. Ս. թուին մէկ ընդարձակ հողը, որով վանքին պարտքերը ամբողջովին վճարուած լինեցած են և Ս. Յակոբայ Միաբանութիւնը ծանր բեռէ մը ազատուած է:

— Գասպայի վաճառականներէն Յակոբ ճէվահիրճեան, որ տեղւոյն երկսուղ պրոցներն արդէն շինած էր իր ծախքովը, այս անգամ երկաթուղոյ մօտ բաւական (Փապրիֆա) մը գնելով աղգին նուիրած է՝ տարեկան հասոյթը նոյն պրոցներու յատկացնելու համար:

— Մի քանի թէ բոլոր անհետեւ լուրերը Ամերիկայէն կուգան, Մանիսայէ ալ կ'ընան պալ, և ապացոյցն ալ ունի որ թաղ. Խորհրդոյ Աստնապետին 15 մէծիտ ամսական որոշուեր է:

— Արդէն Վ. Վեհուհի որ ցարդ Սուլտան կը գտնուէր, Ամերիկայի Լորէնս քաղաքի քարոզիչ կարգուած ըլլալով, անցեալ շաբթու Ամերիկա մեկնեց է:

— Զո արձալի դէպք մը. — Երախայ երեցիկներ. Տիարպէրիք կը գրեն «Բիւզանդի նախ. «Բալուի առաջնորդական վիճակին ենթարկեալ Զերմուկ գաւառակի համանուն աւանին մէջ վերջերս մէկ քահանայի անբաւականութիւնը տեսնուելով, երկրորդ միայն ձեռնադրել տալու կեննեն և կը յաջողին. այն ինչ ձեռնադրեալը գիւղ կը վերադառնայ և քառասունք կը սպասէ, ահա խնդիր մը երեսն կելնէ, նորընծային երեցիկներ ի ծնէ բողոքական է, հետեաբար առանց դրոշմի խորհուրդի: Ուստի այս կնճիւղը լուծելու կելնեն, մըկրտելով երեցիկներ կը կատարեն դրոշմը: Գործը ասով չի վերջանար, կը խորհին մկրտեալը խանձարուրի մէջ պահել երբ օր և այդ երեք օրը անոր լիկ կաթ կերցնել, միայն չը գիտցուիր թէ այժմ թէ կովի: Յետ երեք աւուրց երախայ երեցիկներ իր նոր կապերէն կ'արձակուի և կըլլայ կատարեալ:

(Այսօրուան Թղթարներ)

— Յաւօք կը ծանուցանենք Վեհ. Հայ-
րապետին տկար ըլլալը և վիճակին բա-
ւական մտահոգութիւն պատճառելը:

Ս. Պատրիարքը Ա. գործակատարին
հետ չորեքշաբթի օրը Դատական գոր-
ծոց պաշտօնատունը գացեր է, նախա-
րար Ապտուրահման բաշային հետ տե-
սակցելու համար:

Մահ Այգազովսիի

Բեզերսպուրկէ հեռագիր մը կը ծա-
նուցանէ աշխարհահռչակ ծովանկարիչ
Այվազովսքիի մահը, անցեալ Դչ. օր իր
Թէոդոսիոյ (Քէֆէի) ագարակին մէջ ի
Խրիմ: Հայ արուեստագետը 1817ին ծը-
նած ըլլալով, (ի Թէոդոսիա) 83 տարե-
կան էր:

— Վերջերս Կ. Պոլիս հանգուցեալ Օր.
Պատրոնիկ Աւետիսեան՝ իր կենդանու-
թեանը փափագ կը յայտնէ որ իր անձ-
նական զրամէն 100 օսմ. ոսկի նուիրուի
ազգ. հիւանդանոցին, հոն իր անունով
անկողին մը հաստատելու համար: Բա-
րեսիրտ օրիորդին մահէն ետքը, եղ-
բայրները փութացեր են յիշեալ 100
սոկիի գումարը յանձնել հիւանդանոցի
հոգաբարձութեան, որ կանանց բաժնին
մէջ անկողին մըն ալ աւելցուցեր է:

— Ամերիկա բնակող մէկ քանի շնորհալոյս
ազգայիններ 10 օսմ. ոսկի զրկած են Պատ-
րիարքարան և խնդրած են որ շնորհի մէջ
վարժարան մը բացուի, խոստանալով յառա-
ջիկային վերստին պէտք եղած ծախքերը հո-
գալ:

ՏԻՎԻՆ ՍԻՐԱՆՈՅՇ

Նոր Նախիջևանի մէջ մարտ 19ին ի նը-
պաստ Տիկին Սիրանոյշի Ֆրոն Մրոն անուն
խաղը ներկայացուեր է: Հո՞ծ բաղմութիւն:
Յաւարտ ներկայացման տեղացի օրիորդներ
և տիկիներ տաղանդաւոր դերասանուհիին
յանձնելու են գեղեցիկ ուղերձ մը, իսկ շը-
քեղ շրջադէստ մը և 100 լուրինոց տոմ-
սակ մը. էրիկ մարդիկ ալ ուղերձ մը և 100
լուրինոց տոմսակ մը: Բովանդակ ներկայաց-
ման միջոցին տիկին Սիրանոյշ շարունակ բն-
կանչուեր է որոտընդոտ կեցցէներով: Տեղա-
ցի երիտասարդներ ներկայացուէն ետքը ար-
ձակելու են տիկին Սիրանոյշի կողքին ձիերը
և իրենք տարելու են կառքը մինչև դերասա-
նուհիին տունը: Ուրիշ երիտասարդներ ալ ամ-
բողջ ճամբան լուսաւորեցին են պէնկալեան
հոտով:

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Ի նպաստ Տիկին Պայծառ Ֆասուլեանի
սարքուած ներկայացումը այս իրիկուն տեղի
կունենայ:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՌՆԱՅԻ ՇՈՒՐՁ

Երբոր եփած հաւը խնդայ և կամ ձուկը
ծառը ելլէ. . . :

Կան բաներ, որ այս պարագաներուն մէջ
միայն գոյութիւն կը ստանան. զոր օրինակ
Մուրաա-Սոկրատին նամակին հրատարակու-
թիւնը և կամ «Շաւիղոյին քննադատականը»,
զոր այնքան հանգիստաւորութեամբ խոստացաւ
Վարդօ իր նամակատուին մէջ. . . ու դեռ
կը սպասուի. . . ի հարկէ երբ եփած հա-
ւը խնդայ և կամ ձուկը ծառը ելլէ:

Խմբագրական մոռացողութիւնը հրապա-
րակային վեհափառութեամբ ժողովուրդին
ձօնուած սուտի անակնկալն է, որ իր կարգին
հաճոյք մըն է իր ընթերցողներուն համար:

Բայց Իմասունքա—Հարժուժական դատը այդ կարգին չէր պատկաներ և հետեւաբար տեղի կունենար գեկտեմբերի կիսամսէին նշաւագ ոգեւորութեամբ քան առաջին անգամը:

Երկու կախ գլուխներ առաջնորդ ունենալով իրենց փաստաբանները եւ հետեորդ իրենց աւանդէն աւելի սիրական ու հաւատարիմ աթիւթանդները, դատարանէն ներս կը մտնէին համարուած քայլերով: Կարծես բռնի բաշխուելով կերթային ու իրենց օրօրակառ շայուածքներով մէկը կը փնտռէին ըսող իրենց որ ձգեն սա դատը. բայց միամիտները չէին համարձակեր այդ երկու ճէնթը մէն մենամարտիկներուն գործին խառնուիլ եւ սատանորդներն ալ չէին ուզեր այդ դատական ջնջումը, ապագայ խոշոր ծիծաղէ մը չըզըրկուելու համար:

Ահա հոգեկան այս դրութեան մէջ առաւ գատը ջուրին յանձնող նաւակներու պէս ինքզինքնին կը յանձնէին Կոսթոթին փաստաբաններուն, որոնք սկսած էին բուռն պայքար մը մղել եւ ազատել ջանալ անձնիւրն իր պաշտպանեալը:

Այլ ախտո՞ւ. ճակատագրին պէս անողոր են նաեւ դատարանները, ըլլալիքը կ'ըլլայ...: Դատաւորները ժամ մը կ'առանձնանան, բուռն անհամբերութիւն դատարանին մէջ: Աններդաշնակ նուագներու պէս կը բարախեն երկու հերոսներուն կուրծքերը, որոնք մերթ կ'ուռին ըլլալներու պէս ու մերթ կը ցածնան գաշտերու նման եւ ազով աղւոր աեսարան մը կը պարզեն խորթափանց աչքերու: Եթէ հնար ըլլար, երկուքն ալ ամեն գնով ծախու պիտի ուզէին յաղթութեան դափնին, որ եգական պերճանքը պիտի ըլլար իրենց թերթերուն: ... բայց աւա՜ղ, արժանիքի համեմատ վարձք, աս է բնական օրէնքը:

Աերջապէս դատաւորները դուրս կ'ելլեն խոշոր թուղթ մը ձեռքերնին, մէկ կողմը ճերմակ այնպէս, ինչպէս երկու հերոսներուն երեսները: Կը յանձնարարեն մտիկ ընել ու բարտուցարը կը կարգայ:

«Նկատելով որ այս մարդիկ իրար անարգած են որոշ նախաբինքներով եւ հրապա-

րակի անվայել լեզու գործածած են իրենց թերթերուն մէջ, Դատարանս կը դատապարտէ զԳուրպէթեան 3 օր բանտարկութեան և 50 Փրանք տուգանքի. նոյնպէս կը դատապարտէ զԱւարգօ 3 օր բանտարկութեան եւ 50 Փրանք տուգանքի:

Հաղիւ թէ կը կարգացուի այս վճիռը, դատարանին մէջ թո՛ղք մըն է կը փրթի ու այս խոշոր ծիծաղը կը դառնայ հաւատարկ երկու շուարած ըմբիշներուն միակ վարձատրութիւնը ու միակ փասքը:

Բո՛ղք. իցիւ թէ չարածճիներ չը յաւերժացնեն այս խորհրդաւոր թո՛ղքը երկու խմբագրական անուններուն հետ... ամա կանօրէն:

*
* *

Ախ, սա ճգնաւորեանը... հաւատացէք, ջիղերուս կը գպչի աս անունը, ոչ միայն անունին և իրեն միջև տիրող անհամաձայնութեանը համար—ճգնաւորն ո՛ւր, ինք ո՛ւր—այլ և այն գոոող շեշտերուն համար, զորս համբերով կը դնէ իր յաւակնոտ Փոռնուրուն մէջ: Որչափ ալ չեմ ճանչնար զինքը անձամբ, առանց վախնալու իր սլաքներէն, զոր վստահեմ թէ պիտի ուղղէ ինձ, կըսեմ թէ երբեք համակրած չեմ իրեն և շատ տըխուր գաղափար կաղմած եմ իր չափէն աւելի յաւակնոտութեանը նկատմամբ:

«Սպասեցէք որ ձեր կանակին նոր դաս մըն ալ տամ արդարութեան խարազանով»: Աս չէ՞ր իւրթիմութեամբ, զոր կը ստորագրէր ճրգնաւորեան խնդրոյ առարկայ եղող դատին յայտարարութեանը առթիւ... է՛հ, այսչափ ալ վերէն թռի՛լ...

Սակայն ինչո՞ւս պէտք անձը, զբաղուինք իր դատով, որ այս բոպէիո ամենուն ալ ուշագրութեանը առարկան դարձած է թո՛ղքէն յետոյ. բայց այս կնճոտ դատին համար զիտակս մաքրելու հարկին տակ ներողութիւն կը խնդրեմ այս անգամ ընթերցողներէ:

Ուստի ցտեհութիւն

Փ. ՊՈԼԻՍ

ԳՈՒՇԱԿ

ԱՐՈՒԵԾՏԱՀԱՆԴԵՍԻՆ

ՄԵԾ ՀԵՌԱԴԵՏԸ

Քարիկի թերթերուն մէջ հետեւեալ շահեկան նկարագրութիւնը կը գտնենք Արուեստահանգէսին մեծ հեռագէտին վրայ:

Լուսին շրջալուծն համար, որ ամսուն այս օրերը մեզ իր կոնակը միայն կը ցուցնէ, Տեսագիտութեան պալատին հսկայ հեռագէտը՝ դայն շինող Պ. Կոթիէի կողմէ փորձուեցաւ արեւուն վրայ: Յաջողութիւնը գերազանցած է բոլոր գուշակութիւնները: Հազիւ թէ մեծ հայելին դարձուեցաւ արեւին վրայ, դարձանայի յստակութեամբ պատկեր մը, որուն նմանը տակաւին չէ տեսնուած, ոսպնապակիներէն դուրս ցայտեց: Ամենէն զօրաւոր գործիքները ունեցող դիտարանները իսկ արեւին սկաւառակին վրայ հազիւ նշմարելի բիծեր դիտած էին, զորս աննշան կը նկատէին: Տեսագիտութեան պալատի հեռագէտին յառաջ բերած պատկերը դարձանալի կերպով ցոյց տուած է կեդրոնական մասին մէջ յստակ բիծ մը, որուն բոլոր մանրամասնութիւնները յայտնի կըլլային արտասովոր ճշտութեամբ:

Միանգամայն այս սքանչելի գործիքը ի ցոյց դրած է ամբողջական երեւոյթ մը, որ մինչեւ հիմա գծուարաւ նշմարուած էր, և այն ալ հազուագիւտ պարագաներու մէջ, աւելի գուշակուած էր քան թէ տեսնուած: Այնուհետք խօսիլ այն լուռաւոր խորտուբորտութեանց վրայ որոնք այրող մորթի մը երեւոյթը կու տան լուսագունտին: Մինչև հիմա այս հրեղէն եռունները միմիայն ամբողջական խաւարմանց ժամանակ արեւին արտաքին մասին վրայ ուսումնասիրուած էին: Հոն էր որ հասկցած էին թէ աստղին մակերեւոյթը միապաղաղ չէր, բայց փոթորկալից ովկիանոսի մը պէս ալիկոծուած էր:

Տեսագիտութեան պալատին հեռագէտովը յստակ և որոշ կերպով տեսնուած է ոչ միայն արեւին շրջագիծը, այլ նոյն իսկ զանգուածին վրայի բոցէ ալիքները՝ շարժման մէջ, նոյն իսկ այն օրը այս քննութեան արդիւնքը հաղորդուեցաւ Գիտարանը՝ Պ. Մօրիս Լիովիի որ անոր վրայ պիտի խօսի Գիտութեանց ազգայնամիայն առաջին նստին մէջ: Ուրեմն ասիկա սքանչելի ոկղնաւորութիւն մըն է Տեսագիտութեան պալատին հեռագէտին համար: Այս արեգակնային զննութիւնները արագ և

հազուագիւտ պէտք է ըլլան վասն զի կը վախճուի թէ արեւի ճառագայթներուն արեւածակած ջերմութիւնը որ կը կեդրոնանայ ոսպնապակիներու վրայ թեթեւ տձեւութիւններ առաջ բերէ այս բիւրեղեայ փափուկ կոյտին վրայ: Յայտնի է թէ դայն յղկելու համար ձեռքի կամ ունէ մարմնոյ մը հպուած իսկ վնասակար է: Պէտք եղաւ գործիկ հայելիին և Տեսագիտական պալատին ոսպնապակիներուն վրայ հեռուէն և առանց ուղղակի հրդեհման: Ուրեմն արեւի ճառագայթներուն երկարատեւն ենթարկուած ըլլալով կարելի է որ անոր ճշտութեան հրաշալիքները վնասուին:

Տակաւին չեն կրնար լուսնոյ վրայ ուղղակի զննութիւններու ձեռնարկել: Այսօր 1 մայիս, լուսինը միջօրէականին շրջանակէն կանցնի ժամը 2.21ին և միմիայն արեւին մարը մտնելէն ետքը տեսանելի պիտի ըլլայ: Չորեքշաբթի միջօրէականին շրջանակէն անցնելով ժամը 3ը 1 վայրկեան և 54 երկվայրկեան անցած, արեգակին մարը մտնելէն քիչ մը վերջը տեսանելի պիտի ըլլայ: Հինգշաբթի 4 մայիս պիտի տեսնուի արեւին մարը մտնելէն ժամ մը վերջը, ըսել է ժամը 7 երեք քառորդէն մինչև 8 երեք քառորդ:

Այսօրուրէն զննութիւնները կը սկսին կանոնաւոր ըլլալ, եթէ ժամանակը նպաստէ. բայց աստղաբաշխներուն առաջին գործը պիտի ըլլայ հասարակութիւնը՝ լուսինը այնքան խիստ մօտէն այսինքն դայն շոշափելու չափ տեսնելու հրաւիրելէ առաջ, լուսնոյ լուսանկարները առնել: Ամբողջ լուսինը պիտի երևայ իր բոլոր փայլով մայիսի մէջ:

Ուրեմն այժմ տարակոյս չի վերցնել թէ Տեսագիտական պալատին գործիքը սպասուած արդիւնքը պիտի տայ, և գուցէ աւելին:

ՕՏԱՐ ԴԵՍՊԱՆՈՒՅԻՔ

ՉԻՆԻ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ՄԷ Զ

Բէքինի օտարգետնապաններուն տիկիները ունկնդրութիւն մը խնդրած էին Չինու կայսրուհին՝ Չի-Հիէ որ ընդունած և իր այդ հաւանութիւնը արտաքին գործոց Խորհուրդին միջոցաւ հաղորդել տուած էր գետնապանատունները:

Այդ ընդունելութիւնը մարտ 8ին կատարուեցաւ Եփեսոսէն ինչպէս պալա-

տան սրահին մէջ : Նոյն օրը կէս օրէն երկու ժամ առաջ պալատան պաշտօն-
եաներ օտար դեսպանատունները դա-
ցին : Եւրոպայի տիկիները՝ թարգման-
ներու հետ՝ անդ լիական դեսպանատունը
հաւաքուեցան և անկէ թափօր մը կալ-
մեցին : Թափօրը արքայական քաղաքը
մտաւ թոնկ Հուայի Դուռնէն և զանա-
զան ճամբաներէ անցնելէ ետքը գացին
Քին Չինի թիէն , ուր Չինու կայսրը
նախապէս ընդունած էր դեսպանատան
մարմինը : Տիկիները հիւսիսային դուռ-
նէն մտան բնագարձակ դարաստան մը որ
կը գտնուի մարմարիոնէ կամուրջին մօտ :
Հոն պատրաստուած էին կարմիրներով
ծածկուած գահաւորականներ : Դեսպանու-
հինները կանանչով ծածկուած գահաւո-
րակներէն ելլելով տտոնց մէջ բարձրացան
և անցան Մարմարիոնէ կամուրջը : Ար-
տաքին գործոց Խորհուրդին անդամնե-
րէն շատերը հոն էին հարկ եղած պա-
տիւնները ընելու համար : Եւրոպայի տի-
կիները , որոնց իւրաքանչիւրին գահա-
ւորակը վեցական հոգի կը տանէին , կա-
մուրջին միւս կողմը բազմեցան թրա-
մուէյի այն երկու կառքերը զորս Փրան-
սական սէնաիքա մը նուիրած է : Այդ
կառքերով լիճի մը եզերքէն անցան և
յետոյ կառքերէն իջնելով ընդունուեցան
սրահի մը մէջ , Եի-Լուան թիէն պալա-
տան մօտ : Հոն թէյով պատուասիրուեցան :

Քիչ ետքը լուր եկաւ թէ Կայսրուհին
պատրաստ է : Դեսպանուհիները առաջ-
նորդուեցան Եի-Լուան թիէն : Այդ պա-
լատը , որ ուղղանկիւ շէնք մըն է , պար-
տէշներու մէջ կառուցուած է : Ներքին
սրահին՝ բոյսերով եւ զանազան տեսակ
ժամացոյցներով զարդարուած՝ կեդրոնին
մէջ կայ բարձրաւանդակ մը , երկու բար-
ձր սիւներու մէջ շտեղծ : Այդ բարձրաւան-
դակին վրայ , գահի մը վրայ՝ բազմած
է Չի Հի կայսրուհին՝ դեղին մետաքսէ
ծածկոյով սեղանի մը առջեւ : Չախ կող-
մը՝ սեղանէն քիչ մը առաջ՝ գահի մը
վրայ բազմած է Կայսրը , Կայսերազուն
իշխանուհիները ոտքի կեցած են՝ կայ-
սրուհին շուրջը : Անդլոյ դեսպանին
կինը՝ Լէտի Մակտոննալո միւս դեսպանու-
հիներու անունով բանախօսութիւն մը
արտադրեց բարեմասնութիւններ ընե-

լով Կայսրուհին , Կայսեր և Կայսերական
գերդաստանին համար : Այդ բանախօ-
սութիւնը չինեթէնի թարգմանուեցաւ :
Չի Հի կայսրուհին մէկ նշանին վրայ
Ռիանկ իշխանը բարձրաւանդակին վրայ
եկաւ և ծնրադրելով Ն. Վեհափառու-
թենէն ընդունեց պատասխանող իր մը
զօր կարգաց : Այդ գիրն ալ թարգման-
ուեցաւ : Յետոյ բոլոր դեսպանուհիները
բարձրաւանդակին ճառասանդո խէն կար-
գով վեր եկան՝ նախ ողջունեցին կայսրը
որ անոնց ձեռքերը սեղմեց : Ետոյ անցան
կայսրուհին առջեւէն որ նստած տե-
ղէն կէս մը ելլելով անոնց իւրաքանչիւ-
րին ձեռքը սեղմեց և մարգարիտով զար-
դարուն մատանիներ տուաւ իւրեւ յիշա-
տակ մը այդ արարողութեան : Տիկիները
աջ սանդուխէն իջան , պալատէն դուրս
եկան եւ գացին ուրիշ շէնք մը Չուն
Նիու Չայ : Քիչ վերջը հոն գնաց նաեւ
Կայսրուհին , որուն կը հետեւէին կայ-
սերազուն իշխանուհիները : Հոն Ռիանկ
իշխանը դեսպանուհիները ներկայացուց
կայսրուհին որ նորէն անոնց իւրաքան-
չիւրին ձեռքը սեղմեց : Կայսրուհին հե-
ռացաւ հրաւիրելով իր հիւրերը սեղանի
մը որ պատրաստուած էր Չան Նիու Չայի
մեծ սրահին մէջ : Երկու սեղաններ կա-
յին՝ մէկը դեսպանուհիներուն համար
որոնց իւրաքանչիւրին կ'ընկերանային
իշխանուհիները : Միւսը՝ թարգմաններ-
ուն և արտաքին գործոց Խորհուրդին ան-
դամներուն համար : Սեղանէն ետքը
թատերական նեկայացում մը տրուեցաւ :
Այդ միջոցին Կայսրուհին իր օթեակէն
ելլելով մոտեր մաքար տեսակեցեալ դես-
պանուհիներուն հետ : Հարցուց թէ ցու-
տէն նեղուած են , եղած ընդունելու-
թենէն գոհ են : Ըսաւ անոնց նաեւ թէ
մետաքսեղէններ , իր ձեռքով պատրաս-
տուած նկարներ եւ ուրիշ նուէրներն
պիտի զրկէ նաեւ չորս կտոր մետաքսե-
ղէն թարգմաններէն իւրաքանչիւրին :
Դեսպանուհիները ջերմ շնորհակալու-
թիւն յայտնելով մեկնեցան :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տեղեյս Հայ իգական սեռը արդէն մասնակցած ըլլալով « Վասպուրականի Արքայանամ ընկերութեան », որոշուած է ըստ կազմական կանոնագրի ընդհ. ժողով կազմել, որու օրակարգը պիտի ըլլայ Գործադիր ժողովոյ ընտրութիւն :

Աւստի կը հրաւիրենք որ ամեն մասնակցող եւ մասնակցելու փափաքողները ներկայ գտնուին, կիրակի, ապրիլ 30 ժամը 10էն 11 Ազգ. վարժարանի օրիորդաց շէնքին մէջ :

Ի գիմաց Արքայանամ ընկերութեան անդամուհիներուն

Ա. Անիրխանեանց . Ա. Ալեանորեան
Պ. Յ. Բարսամեան . Ի. Նորիկեան .
Ի. Պալանեան :



Վառնա, 24 ապրիլ

Վէսէլօ հայ դերասանական խումբը հինգ շաբթի գիշեր Ա. անգամ ըլլալով պիտի ներկայացնէ մեծ պատրաստութեամբ

« Լէպլէպիճի Հօրհօր աղա »

Օրերէդ երեք արարուածով : Երաժշտութիւն բարեյիշատակ երաժշտապետ Տիգրան Զուհաճեանի :

ԷՂՍԻԿ ՏՈՒՏՈՒՆ ԽՆՏՐԷԼԷԶԸ

Խտրէլէզի առաջին օրն էր : Մագսուտ աղայի աղբիւրին շուրջը դալարագեղ դաշտին վրայ խումբ խումբ ընտանիքներ նստած կը զուարճանային :

Յորեկուան ժամը 12ին մօտ, Էջմիկ տուտուն, քոյրը Դեղդիկ հանրմը, աղջիկը օր. Ինթոս եւ 12 տարեկան Հրանդանուն տղան, ուտեստի ծրարը ձեռքերնին, արիւն քրտինք մտած, (որովհետեւ ուշ մնացած էին) լճակին եզերքն ի վեր նստելու տեղ կը փնտռէին : Երբ ֆապրիգային ստորտաի ծառերուն տակ հասան, Էջմիկ տուտուն ըստ :

— Դեղդիկ, արթըլս սոքերուս ջուր իջաւ. բերանս ալ տաքէն թութխալ թավասի դարձաւ. սրկէ հունա երթալու կարողութիւն չի մնաց վրաս. եկէք, սա ջուրին քէնարը ծառերուն շուրին տակ սէրպէսթճէ նստինք. հէլպէթ տէ մուշու Արմենակն ալ կուգայ մեզ կը գտնայ :

— Ո՛ւյ բէք աղւոր տեղ է հոս. Ծէնէր պախճէսին անտրմիշ կընէ կոր. պատասխանեց քոյրը. ե ծառի մը տակ նստան : Իսկ Ինթոս որ տունէն մեկնելէն ի վեր մտապրալ եւ տրտում էր, տասը քայլ անդին գտնուած մեծ ստիի մը տակ կեցաւ, անցնող դարձողներուն վրայ խուզարկիչ ակնարկներ ուղղելով :

— Քա աղջիկ, ամմա սիրտ կը հատցունես կոր. շունը փսխէ գլուխը. կ'ուզէ գայ կ'ուզէ չի գայ. ագչամ գալուր սա պահ սալուրին մէկն է եզեր. ասանկ ընելը գիտնայի նէ՛ առտուն շափախին դուրս կելլայի տէ օրս հաւամ չէի ըներ : Ծօ Հրանդ, հայտէ սա կերակուրին չըլընը բեր տէ լոխմա մը բան ուտենք սիրտս կը մարի կոր :

— Եկուր Ինթոս, հաց պիտի ուտենք.

— Դուք կերէք ես չեմ ուտեր.

— Տէյ կիտի վախիթներ տէ՛յ. միտքդ կուգայ Դեղդիկ, խտրէլէզին օրը շափախին դուրս կիյնայինք, հայտար բաշայի չայիրը կերթայինք, ան սիւտլաճնէրը մի կըսես, թաղէ տէրէօթիով չիրօղ սալաթասին մի. չայիր բէհիբինէրը, իլլէ թաղէ եաբրախ տօլմահինէրը մի, բլթիւնէն ալ մահրում մնացինք. է՛հ, ի՛նչ ընենք, աստարին ալ փառք տանք. հոս ալ եափրախին տեղ չըռտէն տօլմասի մը օլտուն ունինք ե՛մ. զարար չունի. պուտա կէչէր :

— Հայտէ Ինդոս, եկուր նստէ՛, քիթէ բերնէ մի բերեր, եկուր սա մայրիկիդ լեցուցած շուտէնը նայէ՛, պէօրէկի պէս տապկեր է, մասներդ հետը պիտի ուտես :

— (Նեղացած) Ճանրմըսինք ա՛, դուք կերէք, ես չպիտի ուտեմ :

— Դէտեմ, միւստագիլ քիթէ բերնէ պիտի բերես :

— Քա եալլում, պէլքի տղան զործ մը ունեցաւ տէ չիլիցաւ գալ. պուրուխ խուլի է. ի՛նչ կրնանք ընել, եկու լոխմա մը բան կի՛ր :

—Ձէ՛ք քանի որ խոստացաւ, անպատ-
ճառ պէտք էր գար, ես անոր պիտի
սորվեցնեմ մարդ խաբելը:

—Աւետարանէն թուղթ չի պատուեց
ե՛ա, պէլքի սէպէպ մը ունէր:

—Ինչ ալ ըլլար, գալու էր. ականջս չի
մտնար:

—Ինչի բան մը ըսեմ Դեղդիկ, երե-
սի ջուրով մենք աս նշանը ետ ընելու-
ենք. ա՛խ, ճիտը տակը մնայ նշանուե-
լէն ետքը ասանկ սփնփաօն երթալ գալլէ
իծառ ընողին. հիմակուրնէ ասանկ ե-
րես կելլան նէ վաղը կարգուն նէ ի-
րարու ինչե՛ր պիտի չընեն:

—Ես տնիկա բէք աղւոր ճամբու պի-
տի բերեմ:

—Հիմա եկու կերակուրդ կեր տէ
ետքը կէնէ ճամբու բեր:

—Ձէ՛, մինչև որ խըրըս չառնեմ,
բերանս փշրանք չեմ դներ:

—Խենդ աղջիկ, մեզք քի կրող կար-
դացող եմ տէ՛յի ալ խուրուլմիշ կըլլամ:

—Ձի հաւնեցա՞ր մօրաքոյր:

—Շիտակը կ'ուզե՞ս, չի հաւնեցայ.
խօսք է ասուեր տէ չէ եկեր եղեր, ինչ
կըլլայ, աշխարհք չի կործանեցաւ ես՝
պէլքի սէպէպ մը ունի:

—Ամենեկին սէպէպ չունի. այսօր կի-
րակի է, խանութները գոյ են, աղէկ
գիտեմ որ ընկերներուն հետ պտտել գա-
ցած է:

—Էյ ինչ կրնանք ընել. դո՞ւն անոր
պիտի հնազանդիս մի ան քեզի. աղ-
ջիկ զաւակի մը կը վայլէ՞ ասանկ բաներ
ընել:

—Ինչ ըսել է, ինչպէս որ ան աղատ
է ուղածը ընելու, ես ալ աղատ եմ ու-
ղածս ընելու:

—Վէստէլամ. . . օլտու օլաճագ, վա-
ղը ելիր էրիկ մարդու շաբխա մը դը-
լուխդ դիր, լմնցաւ դնաց: Ա՛խ, ան
քու հարըդ պառկի պառկած տեղը քի՛
սկաչը պօշ մեծցուց տէ ասանկ եղար:

—Խաւարեայի խօսքեր մտիկ չեմ ը-
ներ:

—Վույ լուսաւորեալ զաւակ, արեւդ
մեռնիմ. մանչ պիտի ծնիս եղեր ամա
աղջիկ ես եղեր:

—Հիմա ինքզինքս սա ծովը կը նետեմ:

—Էյ սանքի ատ ալ կընես, ութան-
մամ մալըմտան:

—Ինծի նայէ՛ Դեղդիկ, հայտէ երեսի
ջուրով տուն իյնանք. ինչ ըսեմ, Աստ-
ուած տիւշմանիս ասանկ զաւակ չի տայ.
էլին զաւակին գլխուն աճապ ինչ ձուներ
պիտի բերէ:

—Քուրուկ կամաց ըսէ՛, չէլլէ մէկը
խմանայ. . . .

—Ինչտար կամաց ըսեմ նէ՛ վաղը
աշխարհք պիտի իմանայ:

—Հայտէ՛ քալեցէք, երեսի ջուրով
տուն իյնանք:

—Այո՛ երթանք որ ես ալ պէտք ե-
ղածը ընեմ անոր:

—Վայ գլխուդ որ ըրածդ թողածդ
չիյտես:

Այս ըսելէ ետքը լեցուն ծրարը ա-
ռած տուններին վերադարձան, մինչև
հոն շարունակելով իրենց խրոչոյթը:

ՈՒՆԻՆԴԻՐ

(Մինակ փոքր տղաքները չեն որ եր-
բեմն ծնողաց վայելելիք զուարթ ժամն-
ըր կը դառնացնեն. երես առած հա-
սուկ զաւակներ ալ կան, մանչ կամ աղ-
ջիկ որոնք օրիորդ ինչոսին պէս քիթէ
բերնէ կը բերեն: Ամօթ իրենց)

ԻՈՒԿԵՆՏԷՐ ՇԷՀՐԻԲԵԱՆ

Կահագործ (Մառանկօզ)

Մուսալլա, Մանուկեաններու շէնքին դիմացի
փողոցին մէջ, թիւ 1159

Կը պատկանէ բարիզեան նրբին
ճոշակաւ տնական կահկարասիքներ զա-
նազան տեսակներով: Գին դիւրամատչելի:

Մ. 2.

ՀՈՎԱՍՈՒՆ

Սիրուն բանաստեղծութեանց հա-
տորիկ մըն է, ընթերցանութեան ար-
ժանի: Գինն է 25 սանդիմ, շատ առնող-
ներու համար չափաւոր զեղջ: Գիմել
Զարպհանէլեան գրատուն Վառնա:



ՆՈՐ

Ա. Զ. Մ. Ա. Տ. Ո. Ի. Ն.

Կ. Ա. Զ. Ն. Ա. Ռ. Ե. Ա. Ն. Ի.

Սագալը չէ՞մէ, աղջկանց կիմ-
նաղիէի դէմը, վարնա:

Ոսկեզօծ, կաշեկազմ, լաթակազմ և
թղթակազմ եւրոպական ճաշակաւ:

Դիւրամատչելի գիներ: Կը պատրաստէ
նաեւ վաճառականական տոմարներ եւ
դպրոցական տետրակներ:

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

«Գայլ Վահան» ողբերգութեան հան-
գուցեալ հեղինակին սցեն Բ. Կրկն ալ կը
յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը:
Գինն է 1 Փրանք: Գիմել առ Վրամ Մանավ-
եան, բոսթրէսթանթ, վարնա:


ՆԷՏԱ

Պուլկար հռչակաւոր հայրենասէր գը-
րագետ Լիւպէն Գարալէլօֆի դրած սոյն
գիրքը կարծէ որ ամեն հայ կարգայ,
որով բաւական սրոշ զաղափար մը կը

կազմէ Պուլկարիոյ աշատութենէն ա-
ռաջ Պուլկար ժողովուրդին նիստ ու կա-
ցին, սովորութիւններուն ու կրած տա-
ռապանքի մասին:

Գիրքը 112 փոքրագիր երեսներէ
կը բաղկանայ: Ստանալու համար 55
սանդիմի նամակագրոյժ զրկել «Իրա-
ւունք»-ի խմբագրութեան:

Ամենաընտիր տեսակէն, բերնի հա-
մով ապուխտ ու երչիկ ուտել ուզողնե-
րը կը հրաւիրուին ի Մուսալլա Տ. Ե-
ւագրի Կիւմրի շճեանի նպարափաճառա-
տունը, ուր մասնագէտի մը ձեռքով
պատրաստուած ապուխտ եւ երչիկ կը
ծախուին գոհացուցիչ գինով:



Վառնա, Բուխարսթա փողոց թիւ 112

ԲԵՐԵԼԻ ԿՐՕՐԿԻԿԻ

ՊՈՒԼԿԱՐԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Կը չինէ ու կը պատրաստէ ոսկիէ և
արծաթէամեն տեսակ զոյրծեր, լա-
տիկէ (ֆառլոյֆ) և մետաղէ կնիքներ,
քլիշէներ և կալվանօ կըսէ: Ինչեքը յոյժ
չափաւոր:

6

Отговорникъ М. Сконовъ
Печатница „Взаимность“ — Варна

